

**ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԵՎ ՍՏ. ԶՈՐՅԱՆԸ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ»
ԷՊՈՍԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ ԲՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

1938 թ. սեպտեմբերի վերջերին կազմվում է գիտական հանձնախումբ. որի վրա պարաս-
եանություն է դրվում՝ «Սասնա Մոերի» տարբեր ժամանակներում գրի առնված տպագրի և
աակավին անտիպ շուրջ 60 պատումների հիման վրա հյուսել զգալի համահավաք բնագիրը
Ժամանակը շատ կարճ էր. պե՜տք էր մինչև տարվա վերջը ո՛չ միայն ավարտել գործը, այլև
նրա ուսերեն թարգմանությունը, այն հաշվով, որ Ղորեկյանի օրերին (1939 թ. սեպտեմբեր)
դրանք լույս ահեսին Երևանում և Մոսկվայում: Այս դժվարին, ծանր ու պատասխանատու
խնդրի իրականացման են յժվում պրոֆ. դ-ր Մ. Արեղյանը, պրոֆ. Գեորգ Արովը և ՍՍՀՄ ԳԱ
հայկական մասնաճյուղի ազգագրաբանաաղ Արամ Ղանալանյանը: Նախաճաճի իրավունք-
ները վերապահվում են Գ. Արովին:

1938 թ. դեկտեմբերի առաջին ասանօրյակին գումարված հատուկ նիստում ընթերցվում
է «Սասունցի Դավիթ» էպոսի նոր, համահավաք բնագիրը, որից հետո տեղի է ունենում մըտ-
քերի բուռն փոխանակություն, որին մասնակցում են այն ասրիների մեր հեղինակավոր գրող-
ներն ու գիտնականները՝ Ավ. Իսահակյանը, Ստ. Զորյանը, Դ. Դեմիրճյանը, ակադ. Հ. Պրեյլին,
նտ. Հիսիցյանը և շատ ուրիշներ: Մեզ է հասել մի քանի օր շարունակվող այդ նիստերի սղագը-
րությունների հիմնական մասը՝ վերանայված մասամբ հենց իրենց՝ ելույթ ունեցողների կող-
մից: Դրասցից նպատակահարմար ենք գտնում տպագրության հանձնել երկուսը՝ Ավ. Իսահակ-
յանի գիտագրություններից մեկը (նա ելույթ է ունեցել մի քանի անգամ) և Ստ. Զորյանի ելույ-
թը: Առաջինը գրված է Վարպետի ձեռքով, երկրորդը՝ սղագրության ուղղված տարբերակն է,
նայված հեղինակի՝ Սա. Զորյանի կողմից: Այնպես որ երկուսի հիմքն էլ հեղինակային ինք-
նագրերն են: Նրանց ելույթներում կան ուշագրավ մտքեր, զիտագրությունների ու գրականա-
մական փաստեր ու առարկաներ, որոնք այսօր էլ ուսանելի են բանագետների ու գրականա-
գետների համար և կարող են օգուտ բերել հայ ժողովրդական վեպի ուսումնասիրությանը,
համահավաք բնագրի, այսօր արդեն քառասուն ասրիների հեռավորությունից՝ վերանայման
ու վերականգնման խմբագրման գործին:

Ավ. Իսահակյանի և Ստ. Զորյանի ելույթների՝ մեր ձեռքի տակ գտնվող սույն բնագրերը
տպագրվում են անփոփոխ, մեկ-երկու տեղ միայն շտկելով կետադրությունը՝ ըստ ներկայումս
գործող կանոնների, և օտարելով անհրաժեշտ վրիպակները:

ՊԻՈՆ ՀԱՅՈՐՅԱՆ

ԻՍԱՀԱԿՅԱՆ

Ընկերներ, Մհերը խորունկ հարց է, բարդ պրոբլեմ: Ես կարծում եմ, որ
Մհերը մեր հին Միհրն է. հրի աստվածը, Միթրան, մեր հեթանոսական աստ-
վածը:

Դավիթը հայ ժողովրդի քրիստոնեական աշխարհայացքի արահայտու-
թյունն է, իսկ Մհերը՝ նրա հեթանոսական աշխարհայացքի:

Մհերը, անշուշտ, վրաց Ամիրանն է: Մհեր, Ամիրան, Պրոմեթեոս, Ար-
տավազդ, պարսկական Բյուրասպ՝ իրար հետ խառնված են, նման՝ ձևերով,
տարրեր՝ էություններով: Կա երկու Արտավազդ՝ բարի ու չար: Եզնիկ Կող-
րացին, որ Մ<ովսես> հորենացուց առաջ էր, նրա Արտավազդը բարի է. նա
դուրս պիտի գա, աշխարհը ախրե, և հայ հեթանոսները սպասում են նրան:
Իսկ Մ<ովսես> հորենացու Արտավազդը չար է. նա դուրս պիտի ելնի,

աշխարհը քանդե. որն արդեւելու հասար քրիստոնյա հայերը մուրճի հարձածներով նորից ամրացնում են նրա շղթաները:

Սրանից պարզ երեւում է ալս երկու աշխարհի հակադրությունը:

2. Թումանյանը ուզում էր Մհերը գրել, չգիտեմ՝ ինչ ըրականագիտություն պիտի աար, բայց ես գրեցի նրան, որ Դավթի իր մշակած ոճով պիտի գրել: Թումանյանը չգրեց, փորձեցի իմ ասած ոճով գրել—իմ «Սասնա Մհերը»: Սրա ծաղումը հին է. 1902 թվին. սեպտեմբերին, Բասենի Ջուլալը գյուղում մշեցի որմնադիր մի վարպետ ինձ պատմեց (տետրակներին մեկի մեջ մինչև այսօր պահած ունիմ նրա խոսքերը), որ Մհերը դուրս պիտի ելնե, երբ ուսմ-կությունը աշխարհում տիրող լինի: Ռամկությունը նրա խոսքն է: Մհերը հոր անեծքի տակ, որովհետև նրան գոտեմարտի մեջ գցել է գետին, տնից զրկված՝ շրջում է աշխարհը, տեսնում է շարիքը, անարդարությունը, կռվում է տիրող-ների դեմ և պատժվում: Աւերշ վարիանտով նա ասաց, որ Մհերը դուրս պիտի գա և հայի աշխարհն ազատե:

Նշրակացություն. քրիստոնյա աշխարհը, իրեն տիրող վարդի պաշապան, ընտարկում է Մհերին, իսկ հեթանոսությունը իր հույսը կապել է նրա ազատագրման հետ. Մհերը դուրս պիտի գա, աշխարհը պիտի քանդե և նորից շինե: Հայ ժողովուրդը իր ազատությունը սպասում է հեթանոսությունից, հեթանոս Միհրից: Նա հեթանոս աշխարհի մեջ տեսել է իր ուժը, զորությունը, ազատ կյանքը:

Այս ըրողը ես ասում եմ, իրեն կարծիք, վարկածներ, մտքից անցածներ. գովար է վերջնական ընտ ասել, որովհետև Մհերը շատ առեղծվածային է:

ՍՏ. ԶՈՐՅԱՆ

Ընկ. Սուրեն Հարությունյանի մտահոգությունը՝ «Սասնա Մոեի» էսթետիկական և իգեական կողմի նկատմամբ, ես կարծում եմ, ըրողիս մահոգությունը պետք է լինի և է: Մենք ըրողս ձգտում ենք ունենալ «Սասնա Մոեի» իգեական և գեղարվեստական կատարյալ հյուսվածքը: Նվ որպեսզի մենք այսպիսի մի գործ ունենանք, կամ նպաստենք, որպեսզի այսպիսի գործ լինի, պետք է իսկապես մեր ընկերներին օգնության հասնենք մեր փասաացի դիտողություններով:

Ես կաշխատեմ լինել փասաացի: Ինձ համար այս գործի մեջ ամենակարևորը նրա կառուցվածքն է, ինչ որ և հիմքն է կազմում ըրիգագայի աշխատանքի:

Դուք շատ լավ գիտեք, որ վեպն ունի հիսունից ավելի վարիանտներ. պետք էր կազմել ուրեմն մի կուռ կառուցվածք, որպեսզի ըրող մասերը լինեն համաչափ և օրգանական: Որքան էլ ըրիգագայի անդամները լինեն օժտված մարդիկ, այնուամենայնիվ, ես կարծում եմ, հնաբավոր չէր այդ կարճ ժամանակամիջոցում տալ իսկական օրգանական մշակված գործ, Նվ այդ երեաց երեք կազմողների ընթերցումից: Ինձ թվում է, որ սկզբից մինչև վերջ էպոսն ունի մի շարք թուլացնող մոմենտներ, ավելորդ բաներ, Օրինակ, սկսենք Սանասարից: Ինձ թվում է. որ Սանասարի մասը բավական ծանրաբեռնված է կողմնակի էպիզոդներով, որոնք և վնասում են երկի կուռ կառուցվածքին:

Ասեմ, թե ինչպես եմ ցանկանում պատկերացնել նրա սխեման: Սանասարը և Բաղդասարը ծնվում են Մովսիսարից: Մելիքն ուզում է գլխատել նրանց մորը և զոհաբերել նրանց իր կուռքը: Ահա այստեղ, այս պատմության շուրջը ահագին պտույտ է կատարվում: Մինչդեռ, ինձ թվում է, լավ կլիներ, որ երբ պարզվում է այդ բոլորը՝ որդիները և մայրը կաբող էին, առանց երկար ընդմիջումների, վերջ տալ Մելիքի կյանքին և դալ Սասուն ու հիմք դնել Սասնա տանը, միացնելով դրան, իհարկե, ճանապարհին կատարված դեպքերը՝ նրանց ուժովնալը, Քուռկիկ Ջալալին և այլն: Հետո, որպեսզի Սասունին անուն դնեն, ահագին պատմություն են սկսում: Մի երկուհարյուր տարեկան մարդ են զտնում, թե արի, անուն դիր մեր տանը և այլն: Մինչդեռ լարիանտներում կա ավելի կարճ բաղադր. պատահաբար մի գլուզացի հյուր է գալիս նրանց, և եղբայրները նրան են դիմում այդ խնդրով: Եվ նա տալիս է անունը: Եւ այսպես ավելի կարճ է լինում ու էֆեկտավոր, քան 200 տարեկանի երկար էպիկոսը, որն, ինչպես ասի, թուլացնում է կառուցվածքը: Կառուցվածքին չի նպաստում և այն, որ եղբայրներն այցելում են թաղավորներին և ծառայության են մտնում նրանց մոտ:

Ես կարծում եմ, որ Սանասարի ճյուղը, այսպիսով, պետք է բավական կրճատել: Այս ճյուղում առանձնապես ուշադրություն պետք է դարձնել Սասունի հիմնադրության վրա, որտեղից և ծագում են էսոսի հետագա բազմաթիվները:

Մեծ Մհերի մասում, ինձ թվում է, որ նրա հերոսությունը քիչ է. այդքանով նա կարծես թե արժանի չէ Մեծ Մհեր, Առյուծաձև Մհեր կոչվելու: Մի՞թե մեր հիսունից ավելի վարիանտները հնարավորություն չեն տալիս Մհերին պատկերացնել իսկապես Մեծ: Այստեղ պետք էր մի քիչ ավելի լավ ցույց տրվեր նրա պայքարն առյուծի հետ: Դո՛ւնե այն չափով, ինչպես Մծիրին է պայքարում հովազի հետ: Թվում է, թե այդ նկարագրությունը մի որևէ տեղ կարելի է գտնել, գուցե և գրի չի առնված: Այնպես որ ցանկալի էր Մհերին տեսնել իրեն արժանավայել հերոսություններով:

Դավթի ճյուղի մասին: Դավթի ճյուղը մեր էպոսի դադաթն է, որից հետո նա իջնում է՝ Փոքր Մհերով նորից բարձրանալու համար: Դավթի մանկությունը, ինձ թվում է, ընկ. Արովը մի քիչ ծանրարեոնել է, և եթե փոքր-ինչ բեռնաթափ աբվի, ավելի լավը կլինի: Օրինակ, նրա ձրկրորդ թե երրորդ անգամ տավարած լինելը կարծես ոչինչ չի ավելացնում Դավթի հերոսության վրա. ոչինչ չի ավելացնում նրա հերոսության վրա և նրա պայքարը քարայրի ավազակների դեմ. դա նույնիսկ արագ է գցում մյուս դյուցազունների վրա: Ի՞նչ է նշանակում, որ նրանք՝ ազնիվ, անշահախնդիր քեռի Թորոսը, Ջենով Օհանը և մյուսները, ջվալներ վերցնելով գնում են ոսկի բերելու... ավազակներից... ինձ թվում է՝ սրետք է հանել այդ, որովհետև նսեմացնում է դյուցադուներին, ծանրաբեռնում է երկը և չի բնորոշում նրանց:

Դուք չկարծեք, թե ես միայն պակասություններն եմ տեսնում: Մեր էպոսի համար դրվատանքի խոսք ինչքան ուզենք կարող ենք ասել, որովհետև նա այնքան հարուստ է. այնքան ճոխ ու բազմապատկեր, կարող եմ ես ասել նույնիսկ, որ հայոց պատմությունն է այստեղ խտացված: Ես առավելությունների մասին չեմ ուզում խոսել. այդ ակներև է:

Կուռքի ասել նաև, որ Խանդուխտ խաթունի մասում պետք է հանել կոնվեր

թագավորների դեմ: Կոիվը խանդութի ձեռք խնդրողների դեմ—շատ տեղին է: Բայց կոիվը թագավորների դեմ—թուլացնում է երկը և անտեղի է:

Զմշկիկ Սուլթանի և նրա աղջկա մասին: Զմշկիկի դեմքը չի պարզվում. նրա աղջկա վրեժխնդրության առիթը՝ նույնպես: Պետք է պարզել մի քանի խոսքով, որևէ վարիանտից դնել հարկավոր բացատրությունը: Լավ է Փոքր Մհերի մասը, բայց այդտեղ դարձյալ պակասում է պառնաբանությունը: Նրա վարմունքի, թե ինչու է նա դժգոհ: Ինչու նրան չեն ընդունում, ինչու է նա փախչում քարայր: Պետք է այս տալ խտացած և պառնաբանված. ինչու է Մհերը աշխարհից դժգոհ, դուցե աշխարհի անարդարությունից: Իհարկե՝ այդ է: Բայց թվում է, թե հիմք քիչ ունի այս դժգոհությունը, որովհետև նա չունի հարկավոր, անհրաժեշտ պատճառաբանություն. պետք է վարիանտներում փնտրել և այս մոմենտը պարզել: Փոքր Մհերին էլ ծանրարեցնում են մի շարք մոմենտներ, օրինակ՝ մարդակեր պառավի մոմենտը:

Իդեալական տեսակետից էպոսը ուժեղ է: Լեզվի անսակեռից, ճիշտ էքսպոնում Սուրեն Հարությունյանը, վեպը չպետք է անհասկանալի վարիանտներից մեկը մնա: Պետք է այս համաժողովրդական առնին վեպը ժողովրդին մատուցել հնարավորին չափ հասկանալի լեզվով: Ես չեմ ուզում սըննով տեսլ, որ վեպը պետք է բաղբառներից զրկել իսպառ: Բայց մի շարք խրթին, անհասկանալի բառերից կարելի է խուսափել: Պետք է խուսափել դործածված առհասարակ և նման լրագրական բառերից նույնպես, որոնք նորամուտ են: Կամ՝ զործ են ածված թուրքական և պարսկական մի շարք բառեր, որոնք բնորոշ չեն մեր ժողովրդի համար: Ես ընդունում եմ, որ խառն և նման բառեր հարկավոր են և ղաբաշրջանը բնորոշելու տեսակետից իմաստալից, բայց ինչ վերաբերում է մի շարք բառերի, ինչպիսին են՝ սալամաթ, շարուխ, սաբախաան, օրթլաղ, արխային և այլն, սրանք կարելի է շատ հնչյունությամբ փոխարինել այլ բառերով:

Ես ուզում եմ այս աշխատանքը, գտնում եմ, որ կարճ ժամանակում մեծ գործ է արված, բայց դեռևս, խմբագրելու համաստով, քրանաջան աշխատանք կատարելու բավական դժուր է կու: